ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ,ԻՐԱՎՈՒՆՔԻ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

«Հանրային կառավարում» մասնագիտության համար

Մասնագիտություն/ուղղություն ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Որակավորումը Հանրային կառավարում մագիստրատուրա

Ֆակուլտետ Հասարակական գիտությունների

Ուսուցման ձև առկա

առկա - 3-րդ կիսամյակ - 3 շաբաթ (3 կրեդիտ)

Հաստատված է ամբիոնի նիստում

(արձ. թիվ 1. 28.08. 2024 թ.)

Ամբիոնի վարիչ՝ Վ. Հարությունյան

Հաստատված է Հասարակական գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում

(արձ. N 1 06.09. 2024 թ.)

Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Հ. Պապոյան

Կազմող՝ Լ. Ավդալյան

Վանաձոր 2024 թ.

« ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» մասնագիտության գիտահետազոտական պրակտիկայի ծրագիր

1. Պրակտիկայի նպատակը

«Հանրային կառավարում» մասնագիտության գիտահետազոտական պրակտիկայի կազմակերպումը և անցկացումը նպատակ է հետապնդում

- ուսումնառության ընթացքում ինքնուրույն ուսումնասիրման, վերլուծական, հետազոտական աշխատանքների արդյունքում ձեռքբերված պրակտիկ կարողությունների հիմնավորում և ընդլայնում,
- հանրային կառավարում մագիստրատուրայի կրթական ծրագրով նախատեսված մագիստրոսական թեզերի համար անհրաժեշտ նյութերի և տեղեկատվության հավաքում ու մշակում,
- ստացված տեսական գիտելիքների հիման վրա գործնական որոշումների ընդունման և իրականացման արդի մեթոդների յուրացում,
- հանրային կառավարման ոլորտին պատկանող կազմակերպությունների կազմակերպչական և կառավարչական գործունեության սկզբունքների ուսումնասիրման, վերլուծության, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների անցկացման մեթոդների յուրացում:

2. Պրակտիկայի խնդիրները

- մասնագիտական հմտությունների և ունակությունների կիրառում, մագիստրոսական թեզերի թեմաներին համապատասխան տեղեկատվության հավաքագրում և ուսումնասիրություն,
- մասնագիտական գործունեության տարբեր ոլորտներում անհրաժեշտ անձնային որակների զարգացում,
- հանրային կառավարման ոլորտում ճանաչված մեթոդների և սկզբունքների տիրապետում և կիրառում,
- գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում համապատասխան գրականության ձեռքբերում և ուսումնասիրություն:

Գիտահետազոտական պրակտիկայի անցկացման ձևերն են.

- մագիստրանտների աշխատանքը փաստաթղթերի հետ,
- մագիստրանտների աշխատանքը մասնագետների հետ՝ մագիստրոսական թեզի աշխատանքների իրականացման ընթացքում ստանալով համապատասխան աջակցություն և օգնություն,
- համապատասխան գրականության ինքնուրույն ուսումնասիրություն:

Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է ձեռք բերի հետևյալ մասնագիտական հմտությունները և կարողությունները.

- մագիստրոսական թեզի թեմայի շրջանակներում արդիականության և հրատապության գնահատում,
- ստացված արդյունքները ինքնուրույն վերլուծելու և քննադատաբար գնահատելու ունակություն,
- մասնագիտական ոլորտում ինքնուրույն վերլուծական, գիտահետազոտական աշխատանքներ անցկացնելու ունակություն
- ստացված արդյունք-ցուցանիշները այլ կազմակերպությունների համանման ցուցանիշների հետ համադրելու, համեմատական վերլուծություն անցկացնելու, եզրահանգման կարողություն:

3. Գիտահետազոտական պրակտիկայի անցկացման վայրերը

Գիտահետազոտական պրակտիկան նախատեսված է «Հանրային կառավարում» մագիստրատուրա կրթական ծրագրով նախատեսված ուսումնական պլանով էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոնում, այն նախատեսված է երեք շաբաթ տևողությամբ և երեք կրեդիտ ծավալով: Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում իրականացվում են գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում ձեռքբերված ցուցանիշների, տվյալների ուսումնասիրման-հետազոտական, վերլուծական աշխատանքներ:

4. Պրակտիկայի ընթացակարգը

Գիտահետազոտական պրակտիկայի ընթացակարգի բովանդակությունը բխում է պրակտիկայի նպատակներից և խնդիրներից.

Գիտահետազոտական պրակտիկան անց է կացվում 2 փուլով.

- Գործնական- հետազոտական.

Ուսանողները ղեկավարի հսկողությամբ և օգնությամբ աշխատում են համապատասխան տեղերում: Պրակտիկնտները բաժանվում են փոքր խմբերի և առանձին ենթակառույցներում համապատասխան աշխատակցի հսկողությամբ իրականացնում են պրակտիկ գործունեություն, որից հետո պրակտիկանտը

կատարում է ինքնուրույն անհատական աշխատանք՝ կիրառելով տարբեր մեթոդներ և տեխնոլոգիաներ:

- Ավարտական .

Այս փուլում իրականացվում է պրակտիկայի արդյունքների ամփոփում, համապատասխան փաստաթղթերի լրացում, հաշվետվության կազմում:

5. Գիտահետազոտական պրակտիկայի ղեկավարի պարտականությունները.

1. Պրակտիկայի նախապատրաստական փուլում
   - Մշակել թեմատիկ պլան
   - Ուսանողների հետ անցկացնել նախապատրաստական, ճանաչողական բնույթի սեմինար.
2. Պրակտիկայի ընթացքում.
   - Վերահսկել պրակտիկայի ընթացակարգը, ուսանողների հաճախումները.
   - Պրակտիկայի ընթացքում ուսանողներին տրամադրել մեթոդական ցուցումներ:
3. Պրակտիկայի ավարտից հետո.
   - Ստուգել հաշվետվությունը,
   - կազմակերպել պաշտպանություն:

6. Պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները.

1. Պրակտիկայի նախապատրաստական փուլում
   - պետք է մասնակցի նախապատրաստական, ճանաչողական բնույթի սեմինարի.
   - ստանա համապատասխան փաստաթղթավորում՝ կատարած աշխատանքները գրառելու համար
2. Պրակտիկայի ընթացքում.
   - կանոնավոր հաճախի պրակտիկային,
   - ակտիվորեն մասնակցի պրակտիկայի ծրագրով նախատեսված հարցերի ուսումնասիրմանը և քննարկումներին,
   - փաստաթղթերում նշագրում կատարի կատարված աշխատանքի մասին;
3. Պրակտիկայի ավարտից հետո
   - ներկայացնի հաշվետվություն
   - ներկայացնի համապատասխան փաստաթղթերը պատրաստի վիճակում:

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները

(գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի)

	Գնահատման բաղադրիչները	**Հատկացվող միավորը**	**Գնահատում**
1.	Հաճախելիություն	0-10	
2.	Գիտատեսական պատրաստվածություն	0-25	
3.	Մեթոդական պատրաստվածություն	0-25	
4.	Կառավարման հմտություններ	0-20	
5.	Պաշտպանություն	0-20	
6.	Ընդհանուր միավոր	100	

Արտադրական պրակտիկայի հաճախումների հատկացվող միավորները ըստ ուսանողի մասնակցության աստիճանի

Մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորները
96-100	10
91-95	8
86-90	6
81-85	4
76-80	2
0-75	0

Հաստատված է ամբիոնի (արձ. թիվ 7 25.01. 2024 թ.)նիստի N 7 արձանագրությամբ

Էիկ ամբիոնի վարիչ՝ Վ. Հարությունյան